ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 11-ին տեղի ունեցավ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին Խորհրդի նախագահԱրա Շիրինյանը, անդամներ՝ Նարա Շլեպչյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ստեփան Զաքարյանը, Լևոն Գալստյանը։
Օրակարգային հարցերի քննարկումից հետո ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Խորհրդի անդամները լսեցին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի և ֆինանսական գծով փոխտնօրեն Երվանդ Պողոսյանի զեկույցները «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի նախահաշվի, հաստիքացուցակի և վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխությունների մասին։ Արդյունքում որոշվեց հաստատել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի նախահաշվի, հաստիքացուցակի և վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխությունները։

2. Խորհրդի անդամներին ներկայացվեց Խորհրդի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Գայանե Բոյախչյանի զեկույցը «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության» ՓԲԸ-ի 2018թ-ի նախահաշիվների կատարողականների վերաբերյալ։ Արդյունքում որոշվեց հաստատել «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության» ՓԲԸ-ի 2018թ-ի նախահաշիվների կատարողականները։